ու մնացել են Հայկական հնաւանդ սովորութիւն-ներից ու բարքերից շատերը. որպիսիք են՝ փոքրիկ մանկան քնեցնելիս մայրը երկիւղածութեամբ խաչակնքում է *) նրա վրայ և կամացուկ կերպով շշնչում է միայն Յիսուս, Քրիստոս։ Հացի խմորը հունցելուց յետոյ նորադարձ թրքուհին իւր բազուկներով խաչ է քաշում խմորի երեսին։ Քանիցս անգամ ես հարցրել եմ թրքացած կանանցից շատերին, թէ «ինչու՞ էք խաչ քաշում նոր հունցած խմորի վրայ»։ Միշտ պատասխանել են ինձ, միայն «խաչ» բառից խուսափելով, թէ «Աթադան, բարադան կալան բիզըմ քէօհնայ ադաթըմըզդը, «նշանագայ» չէքիրըխ քի, բիզըմ թազայ խամըրմըզ համեաշայ բերաքեաթլի օլսուն»։—Այսինքն՝ մեր հօրից և պապերից մնացած մեր հին սովորութիւնն է, այդ «նըշանը» քաշում ենք, որ մեր խմորը ամեն ժամանակ անհատ ու անպակաս լինի»։ Այսօրուայ պէս ես յիշում եմ հետեւեալ քրիստոնէական սովորութիւնը, որ տեղ-տեղ դեռ ես մնացել է թրքացած գիւղերում անկորուստ։ Զատկի օրը, իմ ծննդավայր Զոռլու գիւղի թրքացած ընտանիքների երեխաները խումբ-խումբ գալիս էին մեր եկեղեցու բակը և իրենց հետ բերած կարմիր ձուանելով (հաւկիթ) խաղում էին մեզ՝ հայ երեխաներիս հետ։ Բայց մենք շատ անգամ խոյս էինք տալիս նրանցից և կամ անգիտակցաբար նրանց դուրս

*) «Աղուանից երկիր», տես, երես 293։